



1500 Լ.Ո. 94-ԲԳ-ՏԱՐԻ, ԹԻՒ 92 (26364) ՈՒՐԱՄԸ, 3 ՅՈՒՆԻՍ 2020 4 ԷՁ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԸ ՆԻՍՏ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՑ՝ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՍԱԼԱՄԵՒԻ ԵՒ ՍՖԷՅՐԻ



Կառավարությունը երեկ կեսօրէ առաջ ժամը 11:30-ին վարչապետարանին մէջ գումարեց իր ընթացիկ նիստը՝ նախագահութեամբ վարչապետ Յասսան Տիապի:

Նիստին ընթացքին քննարկուեցան երկրին մէջ տիրող կացութիւնը, յատկապէս ելեւմտական ու տնտեսական հարցերը:

Կառավարութեան նիստի սկիզբի բաժնին մասնակցեցան նաեւ Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ եւ Դրամատուներու միութեան նախագահ Սելիմ Սֆէյր:

Սալամէի եւ Սֆէյրի ներկայութեան կառավարութիւնը քննարկեց դրամական շուկային մէջ տիրող իրավիճակը եւ լիբանանեան դրամանիշը արժեզրկող սեւ շուկային վերաբերող խնդիրներ:

Ռիատ Սալմէ յայտնեց, որ ամերիկեան տոլարի ստեղծած սեւ շուկային մէջ կատարուող գործառնութիւնները 10-15 առ հարիւրի համեմատութիւնը չեն շրջանցեր՝ աւելցնելով, թէ Կեդրոնական դրամատուին այդ շուկային չի միջամտեր:

Իր կարգին, Սֆէյր յայտնեց, որ ընկերային ցանցերուն եւ տեղեկատուութեան մարզին մէջ ժխտական մթնոլորտ մը գոյութիւն ունի:

Սֆէյր վարչապետարանէն դուրս գալէ ետք ուղղակի այցելեց Լիբանանի մէջ Սեւտական Արաբիոյ դեսպան Ուալիտ Պուխարիի:

Սֆէյր ըսաւ, որ իրենց նպատակն է Լիբանանը վերադարձնել իր նախկին տնտեսական կեանքին ու առօրեային: «Կեդրոնական դրամատան զօրակցութեամբ ամերիկեան տոլար պիտի տրամադրուի լիբանանեան դրամատուներուն», ըսաւ Սֆէյր՝ աւելցնելով, որ Պուխարիի այցելելու նպատակը զայն տիրող տնտեսական պատկերէն տեղեակ պահելն է, ինչպէս նաեւ ընդգծել, թէ Լիբանան չի մոռնար Սեւտական Արաբիոյ բարիքները:

Նիստէն ետք տեղեկատուութեան նախարար Մանալ Ապտէլ Սամատ յայտնեց, որ նիստին ընթացքին վարչապետ Տիապ ըսած է, թէ կան տեղական եւ արտաքին ուժեր, որոնք կը շրջափակեն լիբանանցիները եւ Լիբանանը շրջանային տագնապներու միջամուխ կը դարձնեն:

«Վարչապետը հաստատեց, որ ամերիկեան տոլարի խաղը բացայայտուած է՝ աւելցնելով, որ անոնք մեզմէ բարեկարգումներ կը պահանջեն, մինչդեռ փտածութիւնը կը պաշտպանեն, փտածներուն անձեռնմխելիութիւն կը շնորհեն եւ կ'արգիլեն, որ իւրացուած գումարներուն թղթածրարները տանանք», ըսաւ Ապտէլ Սամատ:

Ան նշեց նաեւ, որ նիստին ընթացքին ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Ռեմն Ղաժար բացատրեց նաւթին Լիբանան հասնելու ուշացման դրդապատճառները:

Ապտէլ Սամատ ընդգծեց, որ կառավարութիւնը վաւերացուցած է Պաշտպանութեան գերագոյն խորհուրդէն իր ստացած այն առաջարկը, որ «Քորոնա» ժաիրին տարածումը կանխարգիլելու նպատակով ընդհանուր զօրաշարժը պիտի յետաձգուի մինչեւ 2 օգոստոս 2020:

Ապտէլ Սամատ նշեց, որ կառավարութիւնը որոշեց համացանցի արագացման դրութիւնը երկարածագել մինչեւ սեպտեմբեր 2020:

Անդրադառնալով Միջազգային դրամական ֆոնտին հետ բանակցութիւններուն՝ Ապտէլ Սամատ հաստատեց, որ կառավարութեան եւ ֆոնտին միջեւ այդ բանակցութիւնները ընթացքի մէջ են եւ ուղղակիօրէն կապուած են բարեկարգումներուն, որոնք գործադրութեան հունին մէջ են:

Նիստէն ետք հանրօգուտ շինութեան եւ փոխադրութեան հարցերու նախարար Միշէլ Նաժժար յայտնեց, որ չինացիները պատրաստ են Լիբանանին օժանդակելու՝ ուժանիւթի, ճամբաներու եւ աղբի յատուկ ծրագիրներով:

Իր կարգին, Ղաժար յայտնեց, որ ելեկտրականութեան մարզը լուրջ դժուարութիւններու մէջ է՝ աւելցնելով սակայն, որ կարելի պիտի ըլլայ վառելանիւթ ապահովել՝ ելեկտրականութեան հայթայթելու համար:

Ղաժար կոչ ուղղեց լիբանանցիներուն՝ մոմ գնելու իրարանցումին մէջ չներքաշուելու:

Միւս կողմէ, երեկոյեան ժամը 5:00-ին վարչապետ Տիապ ընդունեց Լիբանանի մէջ Չինաստանի դեսպան Ուանկ Քիճիանը՝ ներկայութեան նախարարներ Տըմիա-նոս Զաթթարի, Իմատ Յուպալլայի, Միշէլ Նաժժարի, Ռեմն Ղաժարի, Ռաճի Սշարրաֆիի, Տիապի դիւանագիտական հարցերու խորհրդատու դեսպան ժըպրան Սուֆանի եւ Տիապի գրասենեակի տնօրէն Խալէտ Աքարիի:

Նիստին ընթացքին քննարկուեցան բոլոր մարզերուն մէջ Չինաստանի հետ գործակցութիւնը ամրապնդելու կարելիութիւնները, իսկ չինական պատուիրակութիւնը ընդգծեց Լիբանանի հետ իր գործընկերութիւնը աշխուժացնելու պատրաստակամութիւնը:

Շաբ.ը՝ Էջ 4

«ԼԻՊԻԱՆ ՎԵՐԱԾՈՒԱԾ Է ԱՐԱՔԱԿԱՆ ԱԾԽԱՐՀԷՆ ԴՈՒՐՍ ԵՂՈՂ ԵՐԿՈՒ ՌԻՇԵՐՈՒ ՄՐՅԱԿՅՈՒԹԵԱՆ ԴԱՇՏԻ»

Կ'ԸՍԵ ՖՐԱՆՍԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Ֆրանսայի պաշտպանութեան նախարար Ֆլորանս Փարլի նշեց. «Լիպիան վերածուած է արաքական աշխարհէն դուրս եղող երկու ուժերու միջեւ մրցակցութեան դաշտի, ինչ որ Եւրոպային համար վատ է»: «Յակառակ անոր որ Թուրքիան ՕՌԱՆ-ի դաշնակից է, սակայն անոր նաւերը Լիպիոյ ծովափին մօտ գտնուող ֆրանսական նաւերուն նկատմամբ թշնամական վերաբերմունք ցուցաբերեցին», ըսաւ Փարլի:

Շաբ.ը՝ Էջ 4



«ԹՈՒՐԻՔԻՈՅ ԴԵՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԲՈՂՈՔ ԿՐՆԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼ»

Կ'ԸՍԵ ԻՐԱԿԻ ԱՐՏԱԶԷՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Իրաքի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ահմետ Սահաֆ «Սփուր-նիք» լրատու գործակալութեան յայտնեց. «Միակողմանի արարքները պիտի չամրապնդեն անվտանգութիւնը եւ ահաբեկչութեան դէմ միացեալ պայքարի պիտի չյանգեցնեն: Իրաքի համար բաց են իր գերիշխանութեան ոտնահարման հակադարձելու ընտրանքները»:

Շաբ.ը՝ Էջ 4



Ս. ՍՈՖԻԱՅԻ ՅԱՐՅՈՎ ԹՈՒՐԵՈՅ ԳԵՐԱԳՈՅՆ ՂԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ՝ 15 ՕՐԵՆ

ԱՔՍՈՅ. «ԱՊՇԱԾ ԵՆՔ Ս. ՍՈՖԻԱ ՏԱՃԱՐԻ ՀԱՐՅՈՎ ՄԻԱՅՆԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵՆԷՆ»

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Յամի Աքսոյ գրաւոր պատասխանած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեյնի՝ Ս. Սոֆիա տաճարը իբրեւ թանգարան պահելու կոչին: Այս մասին կը հաղորդէ «Անատոլու» լրատու գործակալութիւնը:

«Մենք ապշած ենք Ս. Սոֆիա տաճարին մասին Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան յայտարարութենէն», նշած է Աքսոյ՝ ընդգծելով. «Թուրքիոյ մէջ քայլերու կը ձեռնարկուին կրօնի ազատութիւնը պահպանելու ուղղութեամբ՝ երկրի բոլոր քաղաքացիներուն համար»:

«Մենք ժառանգած են այս տարածքի մշակութային արժեքները: Ս. Սոֆիա տաճարը, ինչպէս նաեւ այստեղի միւս մշակութային ժառանգութիւնները, կը գտնուին Թուրքիոյ տարածքին մէջ: Տաճարի կարգավիճակի որոշումը Թուրքիոյ ներքին հարց է: Ռեւէ անձ կրնայ իր կարծիքը յայտնել, սակայն չի կրնար մեր գերիշխանութեան վերաբերող հարցերուն մէջ կանոն-



ներ թելադրել», նշած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբերը:

Նշեց, որ Փոմփեյն յայտարարած էր, որ Միացեալ Նահանգներու իշխանութիւնները Թուրքիոյ կոչ կ'ուղղեն՝ Պոլսոյ Ս. Սոֆիա տաճարը պահելու իր ներկայ կարգավիճակին մէջ, այսինքն՝ իբրեւ թանգարան, եւ զայն մզկիթի չվերածելու:

Նշեց, որ Թուրքիոյ Գերագոյն դատարանը երեկ ասարտեց Ս. Սոֆիա տաճարը մզկիթի վերածելու հարցին շուրջ իր նիստը: Կճիւր պիտի իրապարակուի 14 օրէն:

Շաբ.ը՝ Էջ 4

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՁ 8 ՀԱՁԱՐ ԼՐՏԵՄԵՐ ԿԸ ՀԵՏԱՊՆԴԵՆ ԷՐՏՈՂԱՆԻ ԸՆԴԴԻՍՏԱԴԻՐՆԵՐԸ

Գերմանիոյ մէջ քաղաքական ապստան խնդրող թուրք գաղթականներուն թիւը 2014 եւ 2015 թուականներու հասաւ տարեկան 1800-ի: Այդ թիւը 2016 թուականին բարձրացաւ 5700-ի եւ շարունակեց տարեկան աճ արձանագրել, իսկ անցեալ տարի, ըստ Գերմանիոյ մէջ պաշտօնական տուեալներու, հասաւ 36.000-ի:

Այդ գաղթականներն շատեր «Արապիա»-ի յայտնած են, որ թուրք գաղթականներուն զուգահեռ, հիւսկ Միլիոն թուրք ընկուիւն ունեցող Գերմանիոյ մէջ աճած է թրքական գաղտնի սպասարկութեան գործակալներուն թիւը:

Անոնք յայտնած են, թէ Գերմանիոյ մէջ թրքական գաղտնի սպասարկութեան



աւելի քան 8000 գործաւակներ եւ հարիւրաւոր լրտեսներ կան, ինչպէս նաեւ թրքական դեսպանատան ճամբով գործող անյայտ թիւով գործակալներ, որոնք բոլորին նպատակը Կիւլէնի հետեւորդներն ու ջիւրիտեղ հետապնդելն է:

«Արապիա» կը յայտնէ, թէ Երտողան կը փորձէ ընդ-

ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ՝ «ՔՈՐՈՆԱ»-Ի ՊԱՏՈՒԱՍՏ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

2 յուլիսի կառավարութեան նիստին Առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեան անդրադարձաւ «Քորոնա» ժաիրին դէմ պայքարին, յատկապէս պատուաստանիւթերու հարցին՝ նշելով, որ աշխարհին մէջ արդէն կան 100-է աւելի թէկնածու պատուաստանիւթեր, որոնք կը յաւակնին դառնալ վերջնական արդիւնք ունեցողներ: Նախարարը հաստատեց, որ Յայաստան ներկայիս կը բանակցի քանի մը ուղղութիւններով, որպէսզի կարենայ պատուաստ ձեռք ձգել, երբ անոնք պատրաստ ըլլան եւ նախքան անոնց սպառումը:

Նշեց, որ 2 յուլիսի դրութեամբ Յայաստանի մէջ «Քորոնա»-ով վարակուածներուն թիւը հասաւ 26.658-ի, որոնցմէ 15.036-ը՝ ապաքինած. կայ 593 նոր դէպք, 459 մահ՝ 6-ով աւելցած:

Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ եւս «Քորոնա» ժաիրի նոր օճախ յայտնաբերուած է: 2 յուլիսի դրութեամբ Արցախի մէջ այս ժաիրով վարակուածներուն թիւը հասաւ 125-ի՝ 6 նոր պարագաներով: Մեկուսացման մէջ կը գտնուին 70 անձեր, մահեր չկան:

ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՁ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԽՈՐՀՐԴԱՐԱՐԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

1 յուլիսին տեսակապի միջոցով գումարուած է Բրիտանիա-Յայաստան խորհրդարանական խումբի անդրանիկ հանդիպումը, որուն մասնակցած են նաեւ Բրիտանիոյ մէջ Յայաստանի Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչները:

Հանդիպումին ընթացքին խումբի ղեկավար ընտրուած է Պահպանողական կուսակցութենէն երեսփոխան Թիմ Լորընը:

Պարոնուի Զարոլայն Քոքս (Լորտերու պալատ) ներառուած է խումբին մէջ իբրեւ համանախագահ, երեսփոխաններ Էստրի Բոզինստեյլ, Ճէմս Կրեյք, Մարք Փրիթ-չըրտը (բոլորը՝ Պահպանողական կուսակցութենէն), Ֆերիալ Զլարըք (Աշխատաւորական կուսակցութիւն) իբրեւ փոխնախագահներ, իսկ Ճէյմս Միլրեյք (Աշխատաւորական կուսակցութիւն)՝ իբրեւ լիազօր պատասխանատու:

Բրիտանիոյ Յայ դատի յանձնախումբի ղեկավար Անթոն Մոսկոֆեան նշանակուած է խումբի քարտուղար: Իր խօսքին մէջ ան անդրադարձած է տարբեր ուղղութիւններով խումբի կողմէ կատարուելիք աշխատանքներուն եւ անոր հետապնդած նպատակներուն՝ ընդգծելով նաեւ Հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ անվտանգութեան գործօնը եւ խաղաղութեան պահպանման կարեւորութիւնը:

Խումբի նպատակը պիտի ըլլայ առաւել զարգացնել հայ-բրիտանական խորհրդարանական կապերը եւ նպաստել երկկողմանի համագործակցութեան՝ առեւտուրի, զբօսաշրջութեան, կրթութեան զարգացման եւ այլ բնագաւառներու մէջ:

Հանդիպումի ընթացքին, երեսփոխաններու խնդրանքով, դեսպանատան ներկայացուցիչը անդրադարձած է Յայաստանի մէջ «Քորոնա» համաճարակի առնչուած իրավիճակին եւ զայն յաղթահարելու ուղղութեամբ իրականացուող քայլերուն:

ԱՐՅԱՆԵԱՆ ԿՈՂՄԻ ՄԵՄԵԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԱՐԴԻՆԱԿԷՏ ԴԱՐՉՆԵԼ ԲԱՆԱԿՅԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Բնակչութիւնը խաղաղութեան նախապատրաստելու կոչը, ամենայն հաւանականութեամբ, Ազրայէճանին կը վերաբերի, որովհետեւ ազրայէճանական կողմն է, որ միշտ կը փորձէ լարւածութիւն ստեղծել ոչ միայն սահմանագիծի ամբողջ երկայնքով, այլեւ տագնապի լուծման ընթացքին մէջ:



Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրոյցի մը ընթացքին նշած է Արցախի Ազգային ժողովի Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ, ՀՀԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի անդամ Վահրամ Բալայեան՝ խօսնելով ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահներու մասնակցութեամբ եւ միջնորդութեամբ 30 յունիսին տեղի ունեցած Յայաստանի եւ Ազրայէճանի արտաքին գործոց նախարարներ Չոխրաբ Մնացականեանի եւ Էլմար Մամետեարովի առցանց հանդիպումին եւ անոր յաջորդած յայտարարութեան մասին:

«Միջնորդ երկիրները քաշ կը գիտակցին, որ Ազրայէճան միշտ ռազմատենչ ընդերով եւ յայտարարութիւններով հանդէս կու գայ: Այս անգամ ալ կողմերուն միջեւ փորձած են հաւասարութեան նշան դնել, մինչդեռ յայտարարութիւնը պետք է հասցեական ըլլայ եւ ուղղուած Ազրայէճանի ղեկավարութեան ու հասարակութեան: Ազրայէճանի իշխանութիւնները պետք է իրաժարին սպառնալիքի իշխուով խօսելը, որովհետեւ միայն այդ պարագային Ազրայէճանի հասարակութիւնը կրնայ հասկընալ, որ իր երկրի ղեկավարութիւնը տրամադրուած է հարցին խաղաղ ճամբով լուծում ապահովելու», ըսած է Վահրամ Բալայեան:

Ինչ կը վերաբերի տեսակապի միջոցով տեղի ունեցած հանդիպումի արդիւնքներուն, ապա, ըստ Վահրամ Բալայեանի, կողմերուն միջեւ յարաբերութիւնները, բանակցային գործընթացը պետք է շարունակուին, որովհետեւ այդ յարաբերութիւններու ընթացքին անելի մեծ կարելիութիւններ կը տեսնուին հարցին մէջ բան մը փոխելու, լուծումներ տալու համար:

«Սակայն Արցախեան կողմին մասնակցութեան պարագային միայն կարելի է արդիւնաւետ դարձնել բանակցային գործընթացը: Միաժամանակ նկատենք, որ Միւսքի խմբակի համանախագահող երկիրներու ներկայացուցիչները անգամ մը եւս վերահաստատեցին, որ հարցը լուծման միայն մէկ ճամբա ունի՝ խաղաղ բանակցային գործընթացի միջոցով: Ազրայէճանին կը հասկցնեն, որ իր ընտրած ճամբան՝ ուժի միջոցով հարցի լուծումը, անընդունելի է եւ անհեռանկար», նշած է Արցախի Ազգային ժողովի Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահը:

Շաբ.ը՝ Էջ 3

ՊԵՐՐԻԻ - ՊԱՍԻԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի երեկ Այն Ռի-նի մեջ ընդունեց Ազգային ազատ հոսանք կուսակցու-թեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլը, որուն հետ ընկարկեց լիբանանեան իրադարձութիւնները:

Անոնք լուսարձակի տակ առին Նաեւ տնտեսական եւ ելեւմտական իրավիճակն ու երկրին դիմագրաւած տագ-նապները:

Աւելի քան մէկուկէս ժամ տեւած հանդիպումէն ետք Պասիլ մեկնեցաւ առանց յայտարարութիւն կատարելու:

Ծանօթ աղբիւրներ ժողովին մասին յայտնեցին, որ Պըրրիի եւ Պասիլ համաձայն են, որ Միջազգային դրամա-կան ֆոնտին հետ բանակցութիւնները հիմնական ընտ-րանք նկատուին, եւ կառավարութիւնն ու խորհրդարանը ճիշդ չխնայեն՝ ֆոնտէն ապահովելու համար ծրագիր մը, որուն պայմանները լիբանանեան գերիշխանութեան եւ Լիբանանի շահերուն չեն հակադրուիր:

Նոյն աղբիւրները ընդգծեցին, որ այս շրջագիծին մէջ Պըրրիի եւ Պասիլ համաձայնեցան շարք մը քայլերու շուրջ, որոնցմէ կարելոյրագոյնը այն էր, որ Կեդրոնական դրա-մատունը հակակշիռի տակ պահէ ամերիկեան տոլարին դիմաց լիբանանեան դրամանշիին արժեքը՝ կանխարգիլե-լու համար ընկերային ընդգլումի որդէն ալիք:

Այս աղբիւրները ընդգծեցին Նաեւ, որ հանդիպումին ընթացքին Պըրրիի եւ Պասիլ ընկարկած են շարք մը այլ հարցեր:

ԱՇԽԱՏԱՌԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՂԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Աշխատաւորական ընդհանուր համադաշնակցութիւնը գումարեց Նիստ մը, որուն ընթացքին աշխատանքի Նա-խարար Լամիա Եամմինէն պահանջեց ապրուստի սղաճի համեմատութիւնը ճշդող յանձնախումբը Նիստի մը հրա-ւիրել եւ բարձրացնել Նուազագոյն աշխատավարձը՝ պաշտպանելու եւ բարելաւելու համար ժողովուրդին գնու-ղական կարելիութիւնը:

Նիստէն ետք Աշխատաւորական ընդհանուր համա-դաշնակցութեան Նախագահի պաշտօնակատար Հասան Ֆաքիի մամլոյ ասուկիսի մը ընթացքին յայտնեց, որ խորհրդատուներու կառավարութիւնը տեղեյալի մէջ է եւ տակաւին իր խոստումները չէ յարգած՝ բարեկարգումնե-րը գործադրելու իմաստով, «մինչդեռ փակուող վաճառա-տուններուն, հաստատութիւններուն եւ ընկերութիւններուն թիւը հետզհետէ աճ կ'արձանագրէ, գործէ արձակուածնե-րուն թիւը իր կարգին մեծ է, իսկ իրենց ամսական աշխա-տավարձին կէտը կամ բառորոշ ստացողներուն թիւը՝ շատ աւելի մեծ», աւելցուց ան:

Միւս կողմէ, տնտեսական խորհուրդներու Նախագահ, Նախկին Նախարար Սոհաբտ Ծըբյի որպարակեց հա-ղորդագրութիւն մը, որ կ'ողջունէ Աշխատաւորական ընդ-հանուր համադաշնակցութեան կողմէ տնտեսական խոր-հուրդներուն հետ հանդիպումի պահանջը:

Ծըբյի խոստացաւ ամենէն մօտ ապագային ճշդել հան-դիպումի թուական մը, որպէսզի ընկարկուին սեփական մարզին վնասները: Ան ընդգծեց, որ երկրին տնտեսական եւ ելեւմտական տագնապէն ամենէն աւելի տուժողը սե-փական մարզն է:

ՍԱԽԻ ԺԵՄԱՅԷԼ ԿՈՃ ՌՈՂԱՆՑ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒՆ՝ ԽԱՂԱՂ ՑՈՅՑԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՈՐՊԷՄՁԻ ԱՆՎԱՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՈՒ ՆԱԽԱԳԱՀԱՎԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԴՄԵՁԷՆ ԿԱՐԵԼԻ ԸԼԼԱՅ ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԻՄՆԵԼ

Փողանգաւոր կուսակ-ցութեան ղեկավար, երես-փոխան Սամի Ժեմայէլ յայտնեց, որ Լիբանանի մէջ ամէն բան քանդուելու ըն-թացքին մէջ է, եւ ոչ ոք մի-ջոցներ կ'որոշգորէ Լիբանա-նը փրկելու:

Ժեմայէլ կոչ ուղղեց լի-բանանցիներուն՝ խաղաղ ցոյցեր կատարելու, որպէս-զի կարելի ըլլայ անկարի կառավարութիւն մը կազմել ու խորհրդարանական ու Նախագահական ընտրութիւններու ընդմէջէն Նոր իշխա-նութիւն մը հիմնել:

Ժեմայէլ շեշտեց, որ Լիբանանի մէջ ներկայիս իշխա-նութիւն չկայ եւ կարելի չէ երկիրը այս վիճակով ձգել:

Ան հաստատեց, որ ժողովուրդը իր ընդգլումը պետք է փոխէ խաղաղ եւ քաղաքակիրթ ներուժի՝ դիտել տալով, որ փոփոխութիւնը կարելի պիտի ըլլայ իրագործել միայն քաղաքակիրթ կերպով:



ՀԱՐԻՐԻ. «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆ Է ԼԻԲԱՆԱՆԸ ՓՐԿՈՂ ԳԱՂՏՆԱԲԱՌԸ»

Նախկին վարչա-պետ Սաստ Հարիրի երեկ Կեդրոնական Պէյրութի իր բնակա-րանին մէջ գտնուող լրագրողներուն հետ ունեցաւ գրոյց մը, որուն ընթացքին շեշ-տեց, թէ երկրին մէջ կայ քաղաքական ուժ մը, որ պատասխանա-տու է այս կառավա-րութեան: «Եթէ այդ պատասխանատու կողմը որոշած է լքել այս կառավարու-թիւնը, ապա այդ իմաստով մենք ոչ մէկ կապ ունինք», ըսաւ ան:

Հարիրի շեշտեց, որ ոչ ոք իրեն հետ ընկարկած է վարչապետի պաշտօնին վե-րադառնալու կարելիութիւնը:

Բայց եւ այնպէս ան նշեց, թէ վարչապե-տի պաշտօնը վերստանձնելու պարագա-յին ինք իր Նախապայմանները յստակօրէն ճշդած է:

Դեպի Արեւելք ուղղուելու առումով, Հա-րիրի յայտնեց, որ Լիբանանը չէ ունեցած կառավարութիւն մը, որ Արեւելքին հետ խնդիր ունեցած է, ընդհակառակն՝ Լիբա-նանի կառավարութիւնները միշտ ալ լաւ յարաբերութիւններ ունեցած են եւ՝ Արեւել-քին եւ՝ Արեւմուտքին հետ, «սակայն ոմանք կը կործեն, թէ Հիւսսատան Լիբանանը պի-տի ֆինանսաւորէ եւ ներդրումներ պիտի կատարէ, առանց բարեկարգումներ շօշա-փելու», աւելցուց Հարիրի:

Ան գզուշացուց երկրին իշխանութիւնը կամ կառավարութիւնը՝ Կեդրոնական դրամատան կառավարիչ Դիաա Սալամէն պաշտօնազրկելէ՝ խոստանալով, որ Մուս-թաքալալ հոսանքը այս իմաստով շատ խիստ կեցուածք պիտի դրսեւորէ:

Ան զարմանք յայտնեց, որ վարչապետ Հասսան Տիպալ երկրին մէջ տիրող տագ-նապը մայրու կերպով կը ներկայացնէ իբ-րեւ դաւադրութիւն: «Ան կ'անտեսէ ելեկտը-րականութեան, հաղորդակցութիւններուն կամ մագուրիին մասին բարեկարգումներու մասին խօսիլը, ընդհակառակն թիրախ կը դարձնէ Լիբանանի մէջ դիւստակցութեան



Ներկայացուցչութիւնը այն երկրին, որմէ Լի-բանան Նիւթական օժանդակութիւն կը պահանջէ», ըսաւ Հա-րիրի՝ ընդգծելով, որ բարեկարգումն է այն կաղտնաբառը, որ կրկնա փրկել Լիբանա-նը:

Երեկոյեան Հարի-րի ընդունեց ժողովըր-դավարական հանդի-պում պլոքի Նախա-գահ, Երեսփոխան Քալմուր Ժամպալթը՝ ընկերակցութեամբ Երեսփոխան Ռաւէ Ապու Ֆաուրի: Ներ-կայ գտնուեցաւ Նաեւ Նախկին Նախարար

Ղաթթաա Խուրի: Հանդիպումին ընթացքին ընկարկուե-ցան լիբանանեան իրադարձութիւնները, ապա այցելուները դարձան Հարիրիի ընթ-րիքի հիւրերը:

Նշենք, որ Հարիրի կեսօրին ընդունեց խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըղը-լին, որուն հետ ընկարկեց երկրին դիմագ-րաւած տնտեսական-ելեւմտական տագ-նապին վերաբերող մանրամասնութիւն-ներ:

Հանդիպումէն ետք Ֆըղլի յայտնեց, որ երկրին մէջ դրական ոչինչ մնացած է՝ աւելցնելով, թէ պետք է աշխատիլ Լիբա-նանի փրկութեան ի խնդիր:

Ան շեշտեց, որ լիբանանեան քաղաքա-կան ղեկավարութիւնները համախմբելու իմաստով աշխատանք պետք է տարուի՝ ընդծելով, թէ այս իմաստով Հարիրի հիմ-նական անձնաւորութիւն է:

«Այս բնակարանը համախոհութեան օրրան է, որուն շնորհիւ կարելի պիտի ըլ-լայ երկիրը փրկել եւ բոլոր աշխարհակե-րու վրայ պայմաններու վատթարացումը կանխարգիլել:

«Անձնական համոզումս այն է, թէ Լի-բանանի կառավարութիւնը վերակազմա-ւորման կարիք ունի: Կոչ կ'ուղղեմ վարչա-պետ Հասսան Տիպալի, որ այլ կառավարու-թիւն մը կազմելու ուղղութեամբ գործէ», հաստատեց Ֆըղլի:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ «ԲՈՐՈՒՆ» ԺԱՀՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԹՆԵՐՈՒՆ ԹԻՒՐ ՀԱՍԱԻ 1796-Ի, ՄԱՀՈՒՆ ԴԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝ 35-Ի, ԻՍԿ ԱՊԱՐԻՆԱՆԵՐՈՒՆԸ՝ 1242-Ի

ՀԱՄԱՏ ՀԱՄԱՆ. «ԲՈՒՐՈՒՆ ՄԵՋԷ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԻԲՐԵԻ ԱՐԴԻՒՆՔ՝ ԼԻԲԱՆԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՆԱՐԱՀԱՅԻՆ ՄԱԿԱՐԳԱԿՈՎ ՆՈՒԱՃՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է»

Առողջապահութեան Նախարարութեան տեղե-կութիւններուն համաձայն, երեկ Լիբանանի մէջ «Զորո-նա» ծաիրով վարակուած-ներուն թիւը հասաւ 1796-ի՝ վերջին 24 ժամուան ըն-թացքին արձանագրելով 8 Նոր վարակուածներ, որոնցմէ 7-ն տեղացիներ են, իսկ մէկը՝ Լիբանան ժա-մանած արտերկրի լիբա-նացի:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Զորո-նա» ծաիրով 35 վարակ-ւած պարագաներ մահա-ցած են, իսկ 1242 ուրիշներ՝ ապաքինած:

Առողջապահութեան Նախարար Համատ Հասան երեկ այցելեց «Օթէ Տիտ» հիւանդանոց, ուր հաստա-տեց, որ հիւանդանոցին մէջ ծառայող հիւանդապահնե-րը, որոնք «Զորոնա»-ով վարակուած էին, արդէն իսկ ապաքինած են՝ աւելց-նելով, որ առողջապահու-թեան Նախարարութիւնը հարկ եղած բոլոր միջոցնե-րուն դիմած է, ինչպէս Նաեւ անոնց ընտանիքները «Փի. Սի. Ար.»-ի քննութեան են-թարկած՝ «Զորոնա»-ի հա-մաճարակի տարածումը կանխարգիլելու համար:

«Մենք՝ իբրեւ առողջա-պահութեան Նախարարու-թիւն, յանձնառու ենք կա-ռավարական եւ անձնա-կան հիւանդանոցներուն վարկը պաշտպանելու: Մենք արդար կ'ըլլանք անոնց հետ եւ կը շնորիա-ւորենք զանոնք՝ իրենց ար-



ձանագրած յաջողութիւն-ներուն համար: Մենք միասնաբար պիտի գոր-ծակցինք լիբանանեան հա-սարակութիւնը «Զորոնա»-ի համաճարակէն պաշտպա-նելու համար: Բոլորին մի-ջէն գործակցութեան իբրեւ արդիւնք Լիբանան միջազ-գային եւ համաշխարհային մակարդակով Նուաճում արձանագրած է», հաստա-տեց Հասան:

Միւս կողմէ, Պէյրութի միջազգային օդակայանի ընդհանուր տնօրէն Ֆատի Հասան յայտնեց, որ Լիբա-նան ժամանող արտերկրի լիբանանցիները իրենց

հետ 15 հազար ամերիկե-ան տոլարի գումար մը ու-նենալու պարագային պետք չունին որդէն քայլի դիմելու, սակայն 15 հազար տոլարէն աւելի գումարի պարագային պետք է ներ-կայանան օդակայանի մաքսատան գրասենեակ ու իրենց գումարին մասին տեղեակ պահեն:

Ֆատի Հասան հաստա-տեց, որ Պէյրութի միջազ-գային օդակայանին մէջ «Փի. Սի. Ար.»-ի քննութիւնը 50 տոլար է՝ աւելցնելով, որ այդ գումարը օդակայանին մէջ չի վճարուիր, այլ՝ օդա-նաւային ընկերութեան:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՐՏԻՆ

- Մարօ Գանտահարեանի մահուան առի-թով՝
- Տէր եւ տիկին Յարութ եւ Վերա Թահմազ-եան (Կիպրոս) 200.000 լ. ո.
- Տէր եւ տիկին Չաւեն Պոյաճեան 100.000 լ. ո.

ԱՔՐ. «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ ԻՐ ԴՈՒՆԵՐԸ ՓԱԿԱԾ Է ԱՅՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՅ, ԵՒ ԿԸ ԿԱՐԾԵՄ ԱՅԴ ՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ Է»

Փոխվարչապետ, պաշտ-պանութեան Նախարար Չէյնա Աբր հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ Մի-ջազգային ընտանիքը իր դռները փակած է այս կա-ռավարութեան դիմաց՝ աւելցնելով, որ ինք կը կար-ծէ, թէ այդ մէկը քաղաքա-կան որոշում է:

«Միջազգային ընտանի-քը կը հաստատէ, որ ինք Լի-բանանին պիտի օժանդակէ, երբ բարեկարգումները գոր-ծադրուին: Մենք այդ բարեկարգումները պիտի կատա-րենք եւ պիտի տեսնենք, թէ ան Լիբանանի օժանդակու-թեան իր յանձնառութեան կառչած պիտի մնա», ըսաւ ան:

Աբր Նշեց, որ կառավարութիւնը Նախանձախնդիր է իր մշակած տնտեսական-ելեւմտական բարեկարգումներուն գործադրութեամբ՝ յայտնելով սակայն, որ այդ մէկը իրա-գործելու համար քաղաքական համախոհութիւն պետք է գոյանայ:

Անդրադառնալով ամերիկեան տոլարին դիմաց լիբա-նանեան դրամանշիի արժեզրկումին՝ Աբր յայտնեց, որ ժժբախտաբար այդ մէկը իրականութիւն է՝ աւելցնելով սակայն, որ լիբանանցի իր վճարումներուն 70 առ հարիւ-րը տոլարին դիմաց լիբանանեան դրամանշիի պաշտօնա-կան սակով, այսինքն՝ 1500-ով կը կատարէ:

Աբր շեշտեց, որ կառավարութիւնը հրաժարելու մասին չի մտածեր՝ նշելով, թէ անկալ 1200 միլիառ լ. ոսկիի գու-մար մը յատկացուցած է օժանդակելու համար որոշ մար-գերու եւ քաղաքացիներու:

Նախարարը ընդգծեց, որ լիբանանեան բանակն ու ապահովութեան ուժերը յանձնառու են, հակառակ ամէն ինչի, երկրին ապահովական կայունութիւնը պահպանե-լու՝ խիստ մերժելով ցուցարարներուն կողմէ բանակին եւ ապահովութեան ուժերուն վրայ յարձակումներն ու անոնց քարկոծումը:

«Ճամբաներու փակումը արգիլուած է, եւ կը ջանանք պաշտպանել խաղաղ ցուցարարները», հաստատեց ան:



ՖԻՐԱՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԲԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսայի արտա-քին գործոց Նախարար Ժան Իվ Լոտրիան երեկ հաստատեց, որ Լիբա-նանի մէջ տիրող կա-ցութիւնը մտահոգիչ է՝ աւելցնելով, որ առկայ ընկերային տագնապը կը թեժացնէ վայրագու-թեան վտանգները:

Լոտրիան հաստա-տեց, որ Լիբանանի կա-ռավարութիւնը պետք է գործադրէ բարեկար-գումները, որպէսզի Միջազգային ընտանի-քը կարենայ անոր օժանդակել:



ՊՈԻՆԱՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԴԵՍՊԱՆՆԵՐ

Լիբանանի մէջ Սեւտական Արաբիոյ դեսպանատունը դարձած է լիբանանցի պատասխանատուներու եւ Լիբա-նանի մէջ օտար երկիրներու դեսպաններու ժամադրա-վայրը:

Արդարեւ, Լիբանանի մէջ Սեւտական Արաբիոյ դես-պան Ռախիտ Պուխարի ընդունեց Լիբանանի մէջ Միաց-եալ Նահանգներու դեսպան Տորթի Շիան, որուն հետ



ընկարկեց լիբանանեան քաղաքական իրադարձութիւն-ները, ինչպէս Նաեւ՝ սեւտական-ամերիկեան շարք մը միացեալ հարցեր:

Պուխարիի այցելեց Նաեւ Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Զրիս Ռամփիլսը, որուն հետ ընկարկեց Լիբա-նանի մէջ տիրող իրավիճակը:

Սեւտոցի դեսպանը ընդունեց Լիբանանի մէջ Արաբա-կան Միացեալ Էմիրութիւններու դեսպան Համատ Շամի-սին: Ընկարկուեցան լիբանանեան եւ շրջանային իրա-դարձութիւնները:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Ա. ՍԱՏՈՒՄԾԱԾԻՆ, ԷԿԵՂԵՑՈՅ

